ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ «ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ» ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԴՏՊ-1032-11002/22-ԳԳ

Քաղ. Երևան 07 փետրվար 2022թ.

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Սամվել Մուրադյանի (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և Գագիկ Տարասյանը, ի դեմս «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021թ. դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), «1032 «Խնամքի ծառայություններ 18 տարեկանից բարձր տարիքի անձանց» ծրագրի 11002 «Տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» միջոցառման (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով պայմանագրի 5.1 կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ գումարից մինչև 3 964 429 (երեք միլիոն ինը հարյուր վաթսունչորս հազար չորս հարյուր քսաներեք) ՀՀ դրամ, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի հավելվածում 1-ում: Ծրագիրն իրականացվում է Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքում՝ ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին ամսական 45 և կազմակերպության միջոցների հաշվին ամսական 15 տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց համար:

1.3. Պայմանագրի գինը կարող է փոփոխվել երկկողմ համաձայնությամբ՝ պայմանագրի 9.7 կետի համաձայն նոր համաձայնագիր կնքելու դեպքում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց

վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.2.3 նախարարության համաձայնությունը ստանալու դեպքում՝ կատարել ՀՀ պետական բյուջեից տրամադրվող ֆինանսական միջոցների հոդվածային վերաբաշխում՝ բայց ոչ ավել, քան ֆինանսական առաջարկի ծախսային յուրաքանչյուր հոդվածի 10%-ի չափով:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 10-ը, իսկ դեկտեմբեր ամսվա համար մինչև դեկտեմբերի 20-ը, պետական մարմին ներկայացնել հանձնման-ընդունման ակտը՝ համաձայն սույն պայմանագրի N5 հավելվածի և հաշվետվություններ համաձայն սույն պայմանագրի N2 և N3 հավելվածների, ներկայացնել միջոցառումների

իրականացման մասին հաշվետվություններ (այդ թվում եռամսյակային հաշվետվություն) մինչև հաշվետու ժամանակահատվածի հաջորդ ամսվա 10-ը, իսկ դեկտեմբեր ամսվա և 4-րդ եռամսյակի համար մինչև դեկտեմբերի 20-ը: Ծրագրի ավարտից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ամփոփ հաշվետվություն:

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. Պայմանագրով սահմանված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարելու դեպքում, դրա արդյունքում առաջացած գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ մինչև տվյալ բյուջետային տարվա նախավերջին աշխատանքային օրը:

2.4.8. Սույն պայմանագրի 4.1-րդ կետով սահմանված հանձնման-ընդունման ակտի հետ միաժամանակ Նախարարություն ներկայացնել կատարված փաստացի ծախսերի վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարի ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի N 5-Ն հրամանով սահմանված տնտեսագիտական դասակարգման սինթետիկ հաշվառմամբ հաշվետվությունը՝ համաձայն սույն պայմանագրի N 3 հավելվածի: «Հաշվետվությանը կից անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարների մասով կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթեր, ինչպես օրինակ՝ հաշիվ ապրանքագրեր, վճարման հանձնարարականներ, աշխատաժամանակի հաշվարկի թերթիկ, աշխատավարձի հաշվարկի կամ վճարման տեղեկագրեր, ճանապարհածախսերի փոխհատուցման թերթիկ և այլն»:

3. Մոնիթորինգը

3.1. Նախարարությունը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Նախարարության և/կամ նրա կողմից լիազորված կազմակերպության կամ անձի կողմից բացառապես նախօրոք մշակված հարցաթերթի միջոցով և/կամ ըստ անհրաժեշտության՝ առանց հարցաթերթի:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ և առաջարկություններ:

3.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է կատարվող գործողությունների շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով գործողություններին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր, ինչպես նաև կապ հաստատելով ծրագրի շահառուների հետ՝ նրանց շրջանում հարցում և եզրակացություն տալու նպատակով՝ առանց կազմակերպությանը տեղեկացնելու կամ ներգրավելու այս գործընթացում:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

3.6. Եռամսյակային հաշվետվությունների ներկայացված և համապատասխան հիմնավորող փաստաթղթերի հիման վրա բոլոր արդյունքային ցուցանիշների կատարողականը գնահատվում է համապատասխան վարչության կողմից՝ ըստ անհրաժեշտության ամփոփ վերլուծությունների և մոնիթորինգի վարչության հետ համատեղ:

4. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

4.1 Պայմանագրի արդյունքն ընդունվում է պետական մարմնի և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատրման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը էլեկտրոնային համակարգի միջոցով պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը (հավելված N 5) և հաշվետվությունը: Ընդ որում կազմակերպությունը հանձնման-ընդունման ակտը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

4.2 Եթե իրականացված միջոցառումը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, պետական մարմինը պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3 Եթե իրականացված միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա պետական մարմինը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում պետական մարմինը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում պետական մարմինը չի ընդունում պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պետական մարմինը էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են հանձնման-ընդունման ակտի հիման վրա՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 4) նախատեսված ամիսներին, ըստ պայմանագրի շրջանակներում փաստացի իրականացված միջոցառումների կատարման արդյունքի:

Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և (կամ) ժամկետներ:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված ծրագրին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն պետական մարմնի կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

6.3 Պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը խախտելու դեպքում կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են միջոցառման իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ

6.5 Պետական մարմնի կողմից պայմանագրի 4.1 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը: Սույն պայմանագրի գործողությունը տարածվում է կողմերի միջև 2022 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի

ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված դրամաշնորհային ծրագիրը (դրամաշնորհային ծրագիրը՝ պետք է բխի միջոցառումների նկարագրի պահանջներից և մեթոդական ցուցումներից) հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը (հավելված 6):

9.2 այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պետական մարմինը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ պետական մարմինը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պետական մարմնի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.3. Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

9.4. կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական՝ *https://www.mlsa.am/?cat=142* կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

9.5. Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը պետական մարմինը այն ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.6. Պայմանագրով ստանձնած պարտավորությունը դադարում է կատարման անհնարինությամբ, եթե դա առաջացել է այնպիսի հանգամանքից, որի համար կողմերից որևէ մեկը պատասխանատու չէ՝ պայմանագրի կատարման անհնարինության մասին ողջամիտ ժամկետում գրավոր ծանուցելով մյուս կողմին: Այդ դեպքում կողմերը իրավունք չունեն միմյանցից պահանջելու պարտավորության կատարում: Սույն կետում նշված պայմանագրի կատարման անհնարինության մասին ողջամիտ ժամկետում մյուս կողմին չծանուցելու դեպքում՝ չծանուցող Կողմը պարտավորվում է մյուս կողմին վճարել տուգանք՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գնի 1 %-ի չափով:

9.7. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.8. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.9. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պետական մարմին	Կազմակերպություն
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն
Ք.Երևան, Կառավարական տուն-3	Ք"Գյումրի Սարգսյան 3-րդ նրբ., 8տ.
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ»ՓԲԸ «Շիրակ» մ/ճ
Հ/Հ 900011016772	Հ/Հ 220063350387000
ՀՎՀՀ 01506515	ՀՎՀՀ 05514397
Նախարարության գլխավոր քարտուղար Ա.Մորադյան	Գործադիր տնօրեն՝ Գ.Տարաբալան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
2022թ. փետրվարի 07-ին
Կնքված ՈԴՏՊ-1032-11002/22-ԳԳ պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Համառոտագիր

«Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ն տարիներ շարունակ իրականացնում է տարեցների սոցիալական պաշտպանության և աջակցության ծրագրեր: Տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց համար ծրագրեր իրականացվում են ՀՀ Շիրակի, Լոռու, Արարատի և Գեղարքունիքի մարզերում:

Սույն ծրագրի առաջարկի միջոցով «Հայկական Կարիտասը» նպատակ ունի շարունակել տարեցների և/կամ 18 տարին լրացած հաշմանդամություն ունեցող անձանց տնային խնամքի ծառայությունների մատուցումը Գեղարքունիքի մարզում, մասնավորապես.

ա) խնամքի, կենցաղային սպասարկման և սոցիալական ծառայությունների տրամադրում՝ ըստ գնահատված կարիքների

բ) բժշկական օգնության կազմակերպում և տրամադրում՝ համաձայն բժշկի նշանակման

գ)հոգեբանական աջակցության տրամադրում՝ ըստ գնահատված կարիքի

դ) խորհրդատվության, ուղեկցման ծառայությունների տրամադրում

ե) սննդի և առաջին օգնության դեղորայքի տրամադրում

զ) ժամանցի կազմակերպում՝տարբեր մշակութային միջոցառումների միջոցով:

Ծրագրի նկարագրություն

Չնայած տարեցների և 18 տարին լրացած հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության ոլորտում վերջին տարիներին իրականացվող բազմաթիվ ծրագրերին, միջոցառումներին, ընդունված իրավական ակտերին՝ դեռևս առկա են բազում խնդիրներ և վերջիններս ունեն պետության և հասարակության մշտական հոգածության կարիքը: Բացի սոցիալական պաշտպանությունն ու խնամքը, որոնք թերևս ամենակարևոր բաղադրիչն են վերոնշյալ խմբերի հետ աշխատանքում, կարևորվում է նաև նրանց ներառումը հասարակության մեջ, առողջ և ակտիվ կենսակերպ վարելը՝ խթանելով ողջ կյանքի ընթացքում նրանց ֆիզիկական, սոցիալական և մտավոր ներուժի օգտագործման մոտեցումները և նպաստելով նրանց մասնակցությանը հասարակական կյանքին՝ ըստ իրենց նախասիրությունների և հնարավորությունների:

Տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրները մշտապես եղել են «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի գործունեության կիզակետում: Սկսած 2002թ. -ից կազմակերպությունը ՀՀ Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Արարատի մարզերում իրականցրել է մի շարք ծրագրեր, որոնց ռազմավարական նպատակն է եղել հաշմանդամություն ունեցող անձանց, տարեցների սոցիալական պաշտպանությունը, խնամքը, սոցիալական ներառումը և հզորացումը: Ծրագրերն ուղղված են եղել նրանց շահերի պաշտպանությանը, կյանքի որակի բարելավմանը, հասարակական կյանքին նրանց անարգել մասնակցությանը, առողջապահական և սոցիալական ծառայությունների հասանելիության ու մատչելիության ապահովմանը, որոնք նպաստել են սոցիալական պաշտպանության ոլորտի կայուն զարգացման քաղաքականությունների մշակմանն ու դրանց իրականացմանն ուղղված միջոցառումներին, տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության և խնամքի տրամադրման ոլորտի հիմնախնդիրների վերաբերյալ հասարակության տեղեկացվածության և իրավագիտակցության մակարդակի բարձրացմանը նպաստող աշխատանքներին:

«Հայկական Կարիտաս»-ի շահառուներն այս ծրագրում թվով 60 65 տարեկանից բարձր և/կամ 18 տարին լրացած հաշմանդամություն ունեցող անձիք են, ովքեր ապրում են միայնակ, չունեն մոտ բնակվող

հարազատներ եւ տնային պայմաններում խնամքի խիստ կարիք ունեն: Նրանք կարիքավորության բարձր աստիճան ունեն՝ ապրում են կենցաղային վատ պայմաններում, բացի կենսաթոշակից եկամուտի այլ աղբյուր չունեն:

Շահառուները ստանում են մշտական խնամք, նրանց տրամադրվում են բժշկական ծառայություններ ու տեղեկատվություն, խնամքի ու առողջապահական պրոֆիլակտիկայի մասին խորհրդատվություն: Կամավորների միջոցով շահառուներին նաեւ տրամադրվում է սոցիալական աջակցություն: Ծրագրի շրջանակներում նրանք ապահովվում են անհրաժեշտ աջակցող եւ վերականգնող պարագաներով՝ ձեռնափայտերով, քայլակներով, պարանոցի ձգափոկերով, շրջանաձեւ բարձերով, տեղափոխվող նստակոնքերով, հակապարկելահարուքային պարագաներով:

Քաղաքացիական իրավունքների պաշտպանության համար տարեց շահառուներին սոցիալական աշխատողի կողմից տրամադրվում է աջակցություն՝ փաստաթղթերի հավաքման հարցում /կենսաթոշակ, սոցիալական նպաստներ, նոր բնակարան ստանալու դիմում, վերանորոգման դիմում, էլեկտրաէներգիայի եւ գազի մատակարարաման միացում, օժանդակություն իրավաբանական խնդիրների լուծման համար/: Ծրագրի շրջանականներում շահառուները ստանում են նաև սնունդ և դեղորայք:

Ծրագիրն իր մեջ ներառում է նաև շահառուների ժամանցի կազմակերպման որոշակի միջոցառումներ, որոնք նպաստում են վերջիններիս ներառմանն ու հասարակական կյանքի ակտիվացմանը:

Համալիր սոցիալական ծառայություն մատուցող ծրագիրը շարունակաբար դրական ազդեցություն է թողնում բնակչությանը տրամադվող ծառայությունների որակի և արդյունավետության վրա: Ծրագիրը արագ արձագանքում է տարեցների, 18 տարին լրացած հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրներին և նպաստում համայնքային մակարդակում նրանց անհատական, գնահատված կարիքից բխող սոցիալական ծառայությունների տրամադրմանը:

Ծրագրի շահառուներն ունեն կայուն առողջական վիճակ, բժշկական ծառայությունների հասանելություն, անհրաժեշտ խորհրդատվության, դեղորայքի հասանելիություն: Ծրագրի շնորհիվ նրանք միայնակ չեն լինի, ավելի լավատես և ինքնավստահ կդառնան:

Սույն ծրագրի առաջարկի միջոցով «Հայկական Կարիտաս» ԲՀԿ նպատակ ունի շարունակել տարեցների և/կամ հաշմանդամություն ունեցող անձանց տնային խնամքի ծառայությունների մատուցումը, որտեղ խնամք իրականացնող խմբերի համար (սոց. աշխատող, սոց. խնամողներ, բուժքույրեր, հոգեբան) ծառայությունների տրամադրումը կլինի հստակ տարանջատված, հիմնված շահառուների կարիքների վրա:

Կազմակերպության փորձառությունը

«Հայկական Կարիտաս»-ը հիմնվել է 1995 թ.-ին Հայ Կաթողիկե Եկեղեցու կողմից:

«Հայկական Կարիտաս»-ը, ունենալով բարեգործական ՀԿ-ի կարգավիճակ, կենտրոնացնում է իր ներքին ջանքերը առավել խոցելի սոցիալական խմբերի պաշտպանության, խնամքի եւ ներառման, առաջնային առողջության պահպանման, համայնքահեն զարգացման ծրագրերի, հայրենիք վերադարձողների կայուն վերաինտեգրման միջոցառումների, մարդասիրական ու զարգացման գործողությունների իրականացմանը:

«Սիրով ու սրտացավությամբ ծառայել տարբեր խոցելի խմբերի՝ հարգելով յուրաքանչյուրի արժանապատվությունը». սա է առաքելությունը, որն իրականացնում է «Հայկական Կարիտաս»-ը: Վերջինիս տեսլականն է լինել հզոր և կարևոր դերակատար Հայաստանի Հանրապետությունում սոցիալական արդարության և սոցիալական պաշտպանության հարցում:

«Հայկական Կարիտաս»-ն ունի 7 հիմնական ռազմավարական ուղղություն.

- Երեխաների սոցիալական պաշտպանություն
- Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառում

- Տարեցների սոցիալական ներառում եվ խնամք
- Աղետների ռիսկի նվազեցում եվ արագ արձագանք արտակարգ իրավիճակներին
- Համայնքային զարգացում
- Միգրացիա եվ ինտեգրացիա
- ՀԿ-ի կազմակերպական զարգացում:

«Հայկական Կարիտաս» -ը իրականացնում է ծրագրեր ՀՀ Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Արարատի մարզերում և Երևանում:

ՏԱՐԵՑՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՈՒՄ և ԽՆԱՄՔ ռազմավարական ուղղության նպատակն է ապահովել դժվարին իրավիճակներում ապրող տարեցների համար սոցիալական կարիքների բավարարման մեխանիզմները, համայնքային կյանքի ինտեգրման ու ակտիվ կենսակերպ վարելու հնարավորությունները:

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՈՒՄ ռազմավարական ուղղության նպատակն է հզորացնել հաշմանդամություն ունեցող անձանց կարողությունները և նրանց համար ստեղծել հասանելի միջավայր:

Տարեցների սոցիալական պաշտպանության և աջակցության ծրագրեր իրականացվում են 2002 թվականից, իսկ հաշմանդամություն ունեցող անձանց ներառման ոլորտում՝ 2007 թվականից:

Նշված աղյուսակում կարող եք տեսնել «Հայկական Կարիտաս»-ի դրամաշնորհային ծրագրերը և բյուջեները:

	Ծրագրի անվանումը	Նպատակը և արդյունքները	Իրականացման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը	Դրամաշնորհի չափը
1	Տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ Լոռու, Շիրակի, Գեղարքունիքի և Արարատի մարզերում	Նպաստել հասարակության մեջ դրական սոցիալական փոփոխություններին՝ տրամադրելով կայուն խնամքի ծառայություններ՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված տարեց և/կամ հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց:	Շիրակի մարզ՝ 2002-2021թթ. Լոռու մարզ՝ 2006-2021թթ. Գեղարքունիքի մարզ՝ 2008-2021թթ. Արարատի մարզ՝ 2016-2021թթ.	Կարիտաս Գերմանիա, Կարիտաս Իսպանիա, Կաթոլիկ Մերձավոր Արևելքի Բարեկեցության ասոցիացիա, Մեդիքոր հիմնադրամ Կարիտաս Ավստրիա, ԱՍՀՆ-պետական դրամաշնորհ	Տարեկան միջինացված բյուջեի չափ բոլոր մարզերի համար՝ 180,000 եվրո
2	Տարեցների ցերեկային խնամքի կենտրոններ Գյուրիում և Տաշիրում	Նպաստել հասարակության մեջ դրական սոցիալական փոփոխություններին՝ տրամադրելով կայուն խնամքի ծառայություններ Գյումրիում և Տաշիրում բնակվող անապահով տարեցներին:	Գյումրի՝ 2006-2021թթ. Տաշիր՝ 2007-2021թթ.	Մեդիքոր հիմնադրամ, Կարիտաս Ավստրիա, Իտալիայի եպիսկոպոսների խորհուրդ, ԱՍՀՆ պետական դրամաշնորհ	Տարեկան միջինացված բյուջեի չափ՝ 115000 եվրո

3	Հայաստանում բոլորի համար ներառական, համապատասխան և որակյալ կրթության խթանում	Նպաստել Հայաստանում՝ բոլորի համար, ներառական, համապատասխան և որակյալ կրթության կայացմանը:	15.11.2019-31.12.2022	Տնտեսական զարգացման և համագործակցության դաշնային նախարարության ՝Կարիտաս Գերմանիայի միջոցով	587210 Եվրո
4	Աուտիզմ ունեցող անձանց սոցիալ-վերականգնողական ծառայությունների մատուցում ցերեկային խնամքի կենտրոնում	Ծրագրի նպատակն է նպաստել 32 աուտիզմ ունեցող անձանց սոցիալականացմանը, նրանց կյանքի որակի բարելավմանը՝ փոխելով հասարակության վերաբերմունքը նրանց խնդիրների լուծման և շրջապատում իրենց ունեցած դերի նկատմամբ:	01.03.2020-31.12.2020	Կարիտաս Ավստրիա ԱՍՀՆ	30440000 ՀՀ դրամ

Ծրագրի նպատակը, խնդիրներն ու ակնկալվող արդյունքները

Ծրագրի նպատակն է՝ նպաստել հասարակության մեջ դրական սոցիալական փոփոխություններին՝ տնային պայմաններում տրամադրելով կայուն խնամքի ծառայություններ խնամքի կարիք ունեցող, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված տարեց և/կամ հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց:

Ծրագրի խնդիրները՝

1. Բարելավել Գեղարքունիքի մարզում ապրող 60 տարեցի և/կամ հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց կյանքի որակը՝ տնային խնամքի ծառայություններ մատուցելու և հասարակության մեջ ներառման գործողությունների միջոցով:

2. Աջակցել շահառուներին՝ ստանալու որակյալ առողջապահական ծառայություններ՝ ուղղորդումների, խորհրդատվության, կենցաղային սպասարկման, սոցիալական խնամքի տրամադրման միջոցով:

Ակնկալվող արդյունքները՝

Ծրագրի արդյունքում աջակցող ծառայությունների մատուցման շնորհիվ ակնկալվում է ունենալ հետևյալ դրական ազդեցությունը.

- Կայուն խնամքի ծառայությունների միջոցով բարելավված է շահառուների կյանքի որակը:
- Շահառուների կայուն առողջական վիճակը պահպանվում է կանոնավոր բժշկական ծառայության, խնամքի և դեղամիջոցների տրամադրման միջոցով:
- Հիգիենայի պահպանումը ու տրամադրվող խնամքը նրանց դարձնում է ավելի համարձակ և ինքնավստահ:
- Շահառուների սոցիալական խնդիրները լուծումներ են ստանում համապատասխան ծառայությունների տրամադրման, խորհրդատվությունների, միջնորդական ծառայությունների կամ անմիջական օգնության միջոցով:
- Շահառուները սոցիալականացված և ներառված են հասարակության մեջ:

Գործողություններ

Որոնք են այն կոնկրետ գործողությունները և մեթոդները ծրագրի նպատակի իրագործմանն ուղղված յուրաքանչյուր խնդրի համար: Ներկայացնել ամսական կտրվածքով աշխատանքային պլան՝ համաձայն ստորև ներկայացված ձևաչափի .

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Կազմակերպություն *«Հայկական Կարիտաս» ԲՀԿ*
Ծրագիր *«Տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ*
Ժամանակահատված *2022թ հունվար-դեկտեմբեր*

Հ/Հ	Գործողություն	Պատասխանատու	Ամիս											
			1	2	3	4	5	6	7	8	9	10	11	1
1	Իրականացնել 60 շահառուների կարիքների գնահատում, պայմանագրերի կնքում, ԱՍԾ կազմում՝ ըստ շահառուի կարիքների:	Ծրագրի ղեկավար, համակարգող, սոց. աշխատող												
2	Կազմակերպել ծառայությունների մատուցումը	Ծրագրի ղեկավար, համակարգող, սոց. աշխատող, հոգեբան, սոց. խնամողներ, վարորդ, կամավորներ												
2. 1	Ցուցաբերել սոցիալական խնամք շահառուներին: Ա խմբի շահառուներին շաբաթական առնվազն 4 այց, Բ խմբին՝ 2:	սոցիալական աշխատող, սոց խնամող												
2. 2	Կազմակերպել բժշկական	Բուժքույր												

	օգնություն և տրամադրել բուժքույրական ծառայություն: Ա խմբի շահառուներին շաբաթական առնվազն 1 այց, Բ խմբին՝ 2 շաբաթը 1 այց:													
2. 3	Տրամադրել հոգեբանական աջակցություն: Առնվազն եռամսյակը 1 անգամ և ըստ կարիքի:	Հոգեբան												
2. 4	Տրամադրել սոցիալական խորհրդատվություն և օգնություն: Սոցիալական աշխատողի այց՝ ամսական նվազագույնը 1 անգամ:	սոցիալական աշխատող												
2. 5	Տրամադրել սնունդ, դեղորայք և հիգիենիկ պարագաներ շահառուներին: Առնվազն 2 ամիսը 1 անգամ:	համակարգող, սոցիալական աշխատող, սոց խնամող, կամավորներ												
2. 6	Կազմակերպել մշակութային միջոցառումներ, էքսկուրսիաներ: Նվազագույնը 1 անգամ եռամսյակում:	համակարգող, սոցիալական աշխատող												

3	Իրականացնել վերագնահատում և անհատական սոցիալական ծրագրերի վերանայում	Ծրագրի ղեկավար, համակարգող, սոց. աշխատող, հոգեբան, սոց. խնամողներ												
4	Կազմել և ներկայացնել եռամսյակային հաշվետվություն	Ծրագրի ղեկավար, համակարգող,												
5	Իրականացնել ծրագրի վերջնական գնահատում	Ծրագրի ղեկավար/ կազմակերպության մոնիթորինգի մասնագետ												

Ծրագրի շահառուները ու շահագրգիռ կողմերը

Ծրագրի ուղղակի շահառուներն են Գեղարքունիքի մարզում /մասնավորապես Գավառ քաղաքում/ բնակվող 60 տարեցներ և/կամ հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձինք:
Քանի որ «Հայկական Կարիտասի» իրականացրած տնային խնամք ծրագիրը գործում է Գեղարքունիքի մարզում, շահառուների մեծ մասն արդեն իսկ ներգրավված է: Շահառուները սովորաբար ընդունվում են կենտրոն իրենց դիմումների համաձայն և/կամ ուղղորդվում են տարբեր պետական և ոչ պետական կառույցների կողմից: Ծրագրի սոցիալական աշխատողն իրականացնում է տնայց և կատարում է կարիքի գնահատում: Գնահատված կարիքների հիման վրա կազմվում է անհատական սոցիալական ծրագիր: Սոցիալական ծառայությունների կողմից ուղեգրումից հետո շահառուների հետ կնքվում է պայմանագիր, որտեղ հստակ սահմանված են կազմակերպության և շահառուի իրավունքներն ու պարտականությունները:

Ծրագրի շահագրգիռ կողմներն են ազգային և տեղական մակարդակի քաղաքականություն մշակողները, ՀՀ կառավարությունը՝ ի դեմս ԱՍՀ նախարարության, տեղական ինքնակառավարման մարմինները, ոլորտում գործունեություն ծավալող պետական և հասարակական բոլոր կառույցները և ողջ հասարակությունը:

Ռիսկերի գնահատում

Ծրագրի իրականացման հնարավոր ռիսկերն են համավարակները և պատերազմի սպառնալիքը:

Covid-19 համավարակով պայմանավորված՝ Հայաստանի հանրապետության ամբողջ տարածքում 2020 թվականի մարտի 16-ից հաստատվել էր արտակարգ դրության ռեժիմ: Այսպիսի ռեժիմը ենթադրում էր հասարակական կյանքի գոյություն ունեցող որոշ օրինաչափությունների փոփոխություն, իսկ որոշների՝ արգելք: Այսպիսով, ստեղծվեց նոր իրավիճակ, որտեղ հասարակական հարաբերությունների որոշ նախկին կանոնակարգեր սկսեցին չգործել, իսկ նոր կանոնակարգերին հարմարվելու համար հարկավոր էր ժամանակ: Ելնելով նման արտակարգ իրավիճակում մարդկանց կյանքի և առողջության ապահովման գերակայության սկզբունքից, ինչպես նաև համաճարակի կանխարգելման, համաճարակային

իրադրության պայմաններում շահառուների պաշտպանության, առողջության պահպանման և առողջական վիճակի բարելավման անհրաժեշտությունից «Հայկական Կարիտասը» որդեգրել է կանխարգելիչ մոտեցումներ՝

- հոգալ շահառուների առողջության վիճակի, հիգիենայի պահպանման մասին
- պահպանել հակահամաճարակային կանոնները:

Առանց դիմակի և ձեռնոցների չայցելել շահառուներին, յուրաքանչյուր այցից առաջ փոխել դիմակներն ու ձեռնոցները, օգտագործել ախտահանիչ միջոցներ, ամենօրյա ռեժիմով լվանալ և ախտահանել համազգեստը:

- Ամենաչնչին ախտանշանների դեպքում չիրականացնել տնայց:

«Հայկական Կարիտաս»ի բոլոր աշխատակիցները ստացել են հակահամաճարակային իրավիճակի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն, պատվաստված են, ապահովում են բարենպաստ և առողջ միջավայրի նկատմամբ շահառուների իրավունքների իրացումը: Ցանկացած ճգնաժամային իրավիճակում կազմակերպությունը առաջնորդվում է շահառուակենտրոն մարդասիրական սկզբունքներով:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Նախարարության գլխավոր քարտուղար

Ս.Մուրադյան

(ստորագրություն) Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Հայկական Կարիտաս» ԲՀԿ

Գործադիր տնօրեն

Գ.Տարասյան

(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված 2
2022 թ. սեպտեմբեր 07 -ին
կնքված N ԴՏՊ-1032-11002/22-ԳԳ պայմանագրի

Դրամաշնորհային հաշվետվություն N_____

1. Ընդհանուր տեղեկատվություն

Ծրագրի անվանում	
Դրամաշնորհի N	
Դրամաշնորհատու կազմակերպություն	
Դրամաշնորհառու կազմակերպություն	
Ծրագրի իրականացման ժամանակահատված	
Հաշվետու ժամանակահատված	
Ներկայացման օր	
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	

2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների , նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Նախարարության գլխավոր քարտուղար՝

Ս.Մորադյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն

Գործադիր տնօրեն՝

Գ.Տարանյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 3
2022թ. «փետրվար» «07»
N ԴՏՊ-1032-11002/22-ԳԳ պայմանագրի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

<< 2022 թվականի պետական բյուջեի----------ամսում փոփոխուն ծախսերի գծով փոխհատուցման ենթակա և հաստատուն ծախսերի գծով փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ

Ծախսային հոդվածներ		Հաստատված նախահաշվի գումարը		Հաշվետու ժամանակահատվածում			Տարեսկզբից աճողական			
Տնտեսագիտական դասակարգման սինթետիկ հաշիվների անվանումը	ծածկագիրը	Պետական բյուջեից	Այլ միջոցներից նախատեսված	Նախատեսված գումարը	Պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարը	Այլ միջոցներից կատարված դրամական միջոցներ	Նախատեսված գումարը	Պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարը	Այլ միջոցներից կատարված դրամական ծախսեր	Այլ աղբյուրների անվանումները
1	3	4	5	6	7	8	9	10	11	12
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝	x	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	*4100*									
Էներգետիկ ծառայություններ	4212									
Կոմունալ ծառայություններ	4213									
Կապի ծառայություններ	4214									
Ապահովագրական ծախսեր	4215									
Գույքի և սարքավորումների վարձակալություն	4216									

Հաննեց՝

Տնօրեն՝----------

Կազմակերպություն՝----------

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
Նախարարության գլխավոր քարտուղար
Ա.Մուրադյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի Գործադիր տնօրեն
Գ.Տարասյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 4
2022 թ. վեցերորդ 07-ին
կնքված N ԴՏՊ-1032-11002/22-ԳԳ պայմանագրի

ՀՀ հազ. դրամ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Մրցույթի պլանով նախատեսված (CPV) կոդը	անվանումը	Միջոցառման Կատարման դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
Լոտ 12 Գեղարքունիքի մարզ Գավառ	99999999 /544	«Տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» Գեղարքունիքի մարզ Գավառ	330.4	660.7	991.1	1321.5	1651.8	1982.2	2312.6	2643.0	2973.3	3303.7	3634.1	3964.429	3964.429

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է մինչև ֆինանսական միջոցների նախատեսումը, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են փոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս փոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
Նախարարության գլխավոր քարտուղար՝
Ս.Մուրադյան
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի գործադիր տնօրեն՝
Գ.Տարասյան
(ստորագրություն)
Կ. Տ.

Հավելված 5
2022 թ. փետրվարի 07-ին
կնքված N ԴՏՊ-1032-11002/22-ԳԳ պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պետական մարմին
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱԿՏ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2022 թ.

Պայմանագրի անվանումը՝ Պետության կողմից դրամաշնորհի ձևով «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությանը տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 2022 թ.
Պայմանագրի համարը՝ N ԴՏՊ-1032-11002/22-ԳԳ
Պետական մարմինը և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված ------ հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

Իրականացված միջոցառման							
անվանումը	գործառույթի համառոտ նկարագիրը	արդյունքը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ պայմանագրի/
		ըստ պայմանագրի	փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և հաշվետվությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.
Պետական մարմին	**Կազմակերպություն**
Նախարարության գլխավոր քարտուղար	**«Հայկական Կարիտաս» ԲՀԿ Գործադիր տնօրեն**
_____ **Ս.Մուրադյան**	_____ **Գ.Տարասյան**
/ստորագրություն/	**/ստորագրություն/**
Կ.Տ	**Կ.Տ**

Հավելված 6

«07» փետրվար 2022 թ -ին
կնքված N ԴՏՊ-1032-11002/22-ԳԳ պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

«ՏԱՐԵՑՆԵՐԻ ԵՎ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՏՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԽՆԱՄՔԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԾՐԱԳՐԻ

«Տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» միջոցառման հիմնական նպատակն է խնամքի կարիք ունեցող, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված՝ տարեց և/կամ հաշմանդամություն ունեցող անձանց և միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնի կողմից ուղեգրված տնային պայմաններում խնամք և սոցիալական ծառայությունների տրամարդրումը:

Դրամաշնորհը տրամադրվում է «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությանը (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ խնամքի կարիք ունեցող, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված՝ տարեց և/կամ հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամք ու սոցիալական ծառայություններ տրամադրելու նպատակով:

Դրամաշնորհի գումարը հաշվարկված է Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի ամսական 45 տարեց և/կամ հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում սպասարկմամբ: Դրամաշնորհի ծախսման ուղղությունները տնօրինում է կազմակերպությունը՝ ըստ իր հայեցողության և ներկայացված ծրագրի: Մյուս ծախսերը հոգում է ծառայություն մատուցող կազմակերպությունը:

Ծրագրի միջոցառման/ծառայության իրականացման նկարագիր

Հ/Հ	Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող միջոցառման						
	անվանումը	նկարագիրը	կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	միջոցառման իրականացման վերջնաժամկետը	հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
1.	«Տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ»	Խնամքի կարիք ունեցող, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված՝ տարեց և/կամ հաշմանդամություն ունեցող անձանց տնային խնամք և սոցիալական ծառայությունների տրամադրում Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքում՝ ամսական 45 շահառուի:	Տնային պայմաններում խնամքի կարիք ունեցող 65 տարին լրացած տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց (այսուհետ՝ շահառու) մատուցվում են հետևյալ ծառայությունները՝ 1) խնամքի ծառայություններ հայցող շահառուի անհատական կարիքների գնահատում և գնահատված կարիքներին համարժեք ծառայությունների մատուցման պայմանագրի կնքում. 2) անհատական սոցիալական ծրագրի կազմում. 3)խնամքի ծառայությունների տրամադրում շահառուի հետ կնքված պայմանագրին, ծառայությունների մատուցման ժամանակացույցին և անհատական սոցիալական ծրագրին համապատասխան, մասնավորապես՝ - կենցաղային սպասարկում.	1) Սոցիալական աշխատանքի իրականացում տարեկան յուրաքանչյուր շահառուին առնվազն 12 անգամ կամ եռամսյակը 3 անգամ, կատարելով համապատասխան հաշվառում՝ ըստ առանձին ծառայությունների, նշելով ծառայություն ստացած անձանց անուն, ազգանունը և ծառայությունից օգտվելու ամսաթիվը. 2) բոլոր շահառուների կարիքների գնահատում առնվազն եռամսյակը մեկ անգամ, կատարելով համապատասխան գրառում շահառուների անհատական ծրագրերում. 3) մշակութային միջոցառումների և	31.12.2022 թվական	էլեկտրոնային բովանդակային հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ (info@mlsa.am էլեկտրոնային հասցեին ուղարկելու միջոցով)	3 964 429 (երեք միլիոն ինը հարյուր վաթսունչորս հազար չորս հարյուր քսաներեքը)

			- բժշկական օգնություն և սպասարկում, այդ թվում՝ դեղերի տրամադրում. -մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում. - ուղեկցման ծառայություններ. - շահառուների իրավունքների և օրինական շահերի պաշտպանություն. 4) պայմանագրում նշված այլ ծառայություններ: **Կազմակերպությունը տնային խնամքի ծառայությունների տրամադրման համար պետք է ղեկավարվի.** • «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով, • ՀՀ կառավարության **2015 թվականի սեպտեմբերի 25-ի** «Երեխաների, տարեց և (կամ) **հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման կարգը և պայմանները սահմանելու, տարեց** և (կամ) **հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը հաստատելու և Հայաստանի**	էքսկուրսիաների կազմակերպում տարեկան առնվազն 4 անգամ, յուրաքանչյուր եռամսյակ՝ առնվազն 1 միջոցառում, ապահովելով յուրաքանչյուր միջոցառմանը շահառուների ընդհանուր թվի առնվազն 30 %-ի մասնակցությունը և այդ մասին կատարել համապատասխան գրառումներ դրա համար նախատեսված գրանցամատյանում՝ նշելով միջոցառման անվանումը, իրականացման վայրը, ամսաթիվը, մասնակիցների անուն, ազգանունները. 4)կենցաղային սպասարկման ծառայություններ՝ ըստ անհրաժեշտության, սակայն ոչ պակաս տվյալ խմբում ընդգրկված շահառուների համար կառավարության որոշմամբ հաստատված			

			Հանրապետության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1112-Ն որոշումով, • ՀՀ կառավարության 2007թ. մայիսի 31-ի «Ծերերի և հաշմանդամների խնամքի և սոցիալական սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» N 730-Ն որոշումով, ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 27-ի «Պետության կողմից երաշխավորված՝ պետական մարմինների ենթակայության ներքո գտնվող սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների կողմից անվճար տրամադրվող սոցիալական ծառայությունների ու սոցիալական աջակցության վճարովի ծառայությունների ցանկերը և սոցիալական աջակցության վճարովի ծառայությունների տրամադրման, սոցիալական աջակցության վճարովի ծառայություններից ձևավորված ֆինանսական միջոցներից սոցիալական աջակցության ֆինանսավորման դեպքերն ու	չափորոշիչից՝ կատարելով գրառումներ համապատասխան գրանցամատյանում. 5)բժշկական օգնության կազմակերպում, առաջին բուժօգնության տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:			

			կարգը սահմանելու մասին» N 1112-Ն որոշումով և ոլորտը կանոնակարգող այլ իրավական ակտերով:				

Ծրագրի գնահատումը

Նշված բոլոր արդյունքային ցուցանիշների կատարողականը գնահատվում է Պայմանագրի N2 և N3 հավելվածների համաձայն հաստատված եռամսյակային և ֆինանսական հաշվետվությունների, նախարարության կողմից իրականացված մշտադիտարկման արդյունքների վերլուծության հիման վրա, ինչպես նաև ՏՀ-ում լրացված տեղեկատվության վերլուծության արդյունքների հաշվառմամբ:

Նշված ցուցանիշների համադրման արդյունքում հնարավոր կլինի գնահատել ծրագրի արդյունավետությունը, ինչպես նաև տրամադրել առաջարկություններ կազմակերպության որակական ցուցանիշների կատարողական արդյունքների հետագա բարելավման համար: Կազմակերպության իրականացված ծրագիրը գնահատվում է բավարար, եթե վերը նշված արդյունքային բոլոր ցուցանիշները, ըստ ներկայացված եռամսյակային հաշվետվության, կատարվել են նվազագույնը 75%-ով:

Պետական մարմին
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Նախարարության գլխավոր քարտուղար՝

Ս.Սուրադյան
(ստորագրություն) Կ.Տ.

Կազմակերպություն

«Հայկական Կարիտաս» ԲՀԿ

Գործադիր տնօրեն՝

Գ.Տարայան
(ստորագրություն) Կ.Տ.